ԵԴ1/2101/01/24
(ԿԴ/0729/01/24)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10 սեպտեմբերի 2024 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԵԴ1/2101/01/24 (ԿԴ/0729/01/24) քրեական վարույթի ընդդատության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի սեպտեմբերի 3-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2024 թվականի օգոստոսի 8-ին Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Մանուել Ֆրունզեի Մարգարյանի

վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով թիվ 46113424 (ԿԴ/0729/01/24) քրեական վարույթը:

Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի օգոստոսի 12-ին որոշում է կայացրել թիվ ԿԴ/0729/01/24 քրեական վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի օգոստոսի 22-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական գործն ըստ տարածքային ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 3-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/2101/01/24 (ԿԴ/0729/01/24) քրեական վարույթի ընդդատության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի սեպտեմբերի 5-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. 2024 թվականի հուլիսի 29-ի որոշմամբ Մանուել Ֆրունզեի Մարգարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ *«նա, իրացնելու նպատակով, ապօրինի՝ խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի թիվ 270-Ն որոշման պահանջները, այն է՝ չունենալով բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառություն իրականացնելու, այսինքն՝ թմրամիջոց պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու կամ առաքելու թույլտվություն, քննությամբ չպարզված հանգամանքներում ձեռք է*

բերել և իր մոտ ու փաստացի բնակության վայրում՝ Կոտայքի մարզի Քասախ գյուղի Եղիշե Չարենց 7-րդ փողոցի 7-րդ տանը պահել է առանձնապես խոշոր չափերի՝ 2.6 գրամ քաշով, ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման հավելված 1-ի աղյուսակի 110-րդ կետով նախատեսված «Մեթամֆետամին» տեսակի և խոշոր չափերի՝ ընդհանուր 24.42 գրամ հաստատուն քաշով՝ ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման հավելված 1-ով նախատեսված աղյուսակի 81-րդ կետով նախատեսված «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որից 2.6 գրամ քաշով «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցը, 2.21 և 20.53 գրամ քաշերով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցները հայտնաբերվել են Կոտայքի մարզի Քասախ գյուղի Եղիշե Չարենց 7-րդ փողոցի 7-րդ տան՝ 2023 թվականի հոկտեմբերի 25-ին կատարված խուզարկությամբ, իսկ 1.04 և 0.64 գրամ քաշերով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցը՝ Մանուել Մարգարյանի՝ 2023 թվականի հոկտեմբերի 25-ին կատարված անձնական խուզարկությամբ»[1]*:*

6. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի օգոստոսի 22-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Դատարանն արձանագրում է, որ սույն քրեական գործով 2023 թվականի հոկտեմբերի 25-ին՝ ժամը 12:02-ին, խուզարկություն է կատարվել Կոտայքի մարզի Քասախ գյուղի Եղիշե Չարենցի 7 փողոցի 7-րդ հացեի տանը, որտեղ հայտնաբերվել է 2.6 գրամ քաշով Մեթամֆետամին տեսակի և 2.21 ու 20.53 գրամ քաշերով Մարիխուանա տեսակի ենթադրյալ թմրամիջոցներ, ապա մեղադրյալ Մանուել Մարգարյանը ձերբակալվել է և ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ ԹԱՇԴՊՎ 2-րդ բաժնում՝ Երևան քաղաքում, նույն օրը՝ ժամը՝ 12:30-ին, որտեղ նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է 1.04 և 0.64 գրամ քաշերով ենթադրյալ Մարիխուանա տեսակի թմրամիջոց:*

Տվյալ պարագայում հետևում է, որ Երևան քաղաքում կատարված՝ մեղադրյալի անձնական խուզարկություն գործողությունը մեկնարկել է ավելի ուշ, քան Կոտայքի մարզում իրականացված բնակարանային խուզարկությունը, ուստի մեղսագրված հանցագործությունն ավարտվել է վերջին չափաբաժինը հայտնաբերվելու պահին:

(…)

---

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթեր 68-78:

Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի իմաստով հատկանշական է, որ քրեական գործով միակ վկան բնակվում է մեկ այլ դատարանի դատական տարածքում՝ Երևանում:

Ողջ վերոգրյալի վերլուծությամբ Դատարանը գտնում է, որ թիվ ԿԴ/0729/01/24 քրեական գործն ըստ տարածքային ընդդատության պետք է փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան (…)»[2]*:*

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Սույն որոշման իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով նախորդ պարբերությամբ թվարկված՝ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու մասին որոշման հիմքում դրված հանգամանքները, պետք է նշել հետևյալը.*

ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված վարութային այն գործողությունները, որի արդյունքում հնարավոր է հայտնաբերել վարույթի համար նշանակություն ունեցող առարկաներ, նյութեր և այլ տվյալներ, կարող են ազդարարել տևող հանցագործության ավարտը միայն նշված վարութային գործողության ավարտման փաստով: Մասնավորապես, խուզարկության ընդհանուր պայմաններից է որոնողական գործողության արդյունքում վերցված օբյեկտների փաթեթավորման և կնիքման պահանջը, որի մասին պետք է նշվի քննչական գործողության արձանագրության մեջ՝ ճշգրիտ նշելով դրա քանակը, չափը, քաշը, անհատական հատկանիշները և այլ առանձնահատկությունները: Այլ մեկնաբանության դեպքում կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ սկսված քննչական գործողության, սակայն որևէ առարկա դեռևս հայտնաբերված չլինելու պայմաններում հանցանքն ավարտված համարվի:

Արդյունքում պետք է արձանագրել, որ

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 6, թերթեր 53-54:

1) Կոտայքի մարզի Քասախ գյուղի Եղիշե Չարենց 7-րդ փողոցի 7-րդ տան խուզարկությունը սկսվել է 2023 թվականի հոկտեմբերի 25-ին, ժամը՝ 12:02-ը և ավարտվել՝ 13:24-ը (հատոր 1-ին, գ.թ. 235-239),

2) Մանուել Ֆրունզեի Մարգարյանը ձերբակալվել է 2023 թվականի հոկտեմբերի 25-ին՝ ժամը 10:30-ին, ՀՀ ՆԳՆ ոստիկանության ԵՔՎ Արաբկիրի բաժնում ենթարկվել անձնական խուզարկության, որը, ձերբակալման արձանագրության հետ, կազմվել է 12:30-ին:

Նման պայմաններում գտնում եմ, որ Մանուել Մարգարյանին մեղսագրվող առերևույթ հանցանքի առարկա հանդիսացող ընդհանուր թմրամիջոցից 1.04 և 0.64 գրամ քաշերով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցները հայտնաբերվել է ավելի վաղ՝ անձնական խուզարկությամբ՝ 25.10.2023թ.-ին, ժամը՝ 12:30-ին, իսկ առանձնապես խոշոր չափերով՝ 2.6 գրամ քաշով «Մեթամֆետամին» տեսակի, ինչպես նաև խոշոր չափերով՝ 2.21 և 20.53 գրամ քաշերով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցները՝ բնակարանի խուզարկությամբ՝ 25.10.2023թ.-ին, ժամը 13:24-ին՝ պայմանավորված վարութային գործողության ավարտմամբ: Հետևաբար, ավելի ուշ ավարտված վարութային գործողության ու դրա արդյունքում հայտնաբերված թմրամիջոցի չափաբաժինը Կոտայքի մարզում հայտնաբերված լինելու պայմաններում, գտնում եմ, որ մեղսագրվող ենթադրյալ հանցանքն ավարտվել է Կոտայքի մարզի դատական տարածքում: Ընդ որում, Մանուել Ֆրունզեի Մարգարյանը ձերբակալվել է ոչ թե բնակարանի խուզարկությունից հետո, այլ նշված գործողությունը սկսելուց շուրջ 2 ժամ առաջ:

Ինչ վերաբերվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորմանը, ապա պետք է փաստել, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում բնակվելով պայմանավորված տարածքային ընդդատությունը փոխելու հարցի կապակցությամբ մեղադրյալը դիրքորոշում չի արտահայտել, այլ կերպ՝ բացակայում է նրա համաձայնությունը վերոնշյալ դրույթի ուժով տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ: Հատկանշական է նաև, որ ՀՀ ԱՆ Արմավիր ՔԿՀ-ի կալանավոր, մեղադրյալ Մանուել Մարգարյանի և

վերջինիս կնոջ՝ վկա Անի Մանուկյանի բնակության հասցեն (հատոր 2-րդ, գ.թ. 19-22) եղել է Կոտայքի մարզի Քասախ գյուղի Եղիշե Չարենց 7-րդ փողոցի 7-րդ տունը, որտեղ կատարվել է խուզարկությունը (...)»[3]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/2101/01/24 (ԿԴ/0729/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

---

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 6, թերթեր 62-67:

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]:

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած են ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտներից, որոնք կարող են առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

4. Այլ պետության տարածքում ենթադրաբար կատարված հանցանքի վերաբերյալ վարույթն ընդդատյա է այն դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մեղադրյալի բնակության կամ հաշվառման վերջին վայրը, իսկ եթե հնարավոր չի եղել այն պարզել, ապա այն դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթը վերջինն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

5. Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը: (...)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(...)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (...)»:

13.1. ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Իրացնելու նպատակով թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) կամ դրանց ածանցյալ ապօրինի արտադրելը,*

պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխանակելը, առաքելը, տարածելը, գովազդելը կամ դրանք ապօրինի իրացնելը կամ մեկ ուրիշի դրդմամբ՝ նրա համար թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) կամ դրանց ածանցյալ ապօրինի ձեռք բերելը՝

(…)

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

(…)

2) առանձնապես խոշոր չափերով (…)»:

Տարածքային ընդդատությունը սահմանող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներից հետևում է, որ որպես քրեական վարույթների դատական տարածքը որոշելու հիմնական կողմնորոշիչ պայման հանդես է գալիս ենթադրյալ հանցանքի կատարման վայրը:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ Երևան քաղաքում կատարված մեղադրյալի անձնական խուզարկությունը մեկնարկել է ավելի ուշ, քան Կոտայքի մարզում իրականացված բնակարանային խուզարկությունը, գտել է, որ քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին[7],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ Մանուել Մարգարյանի անձնական խուզարկությունը կատարվել է ավելի վաղ, քան ավարտվել է վերջինիս Կոտայքի մարզում գտնվող բնակարանի խուզարկությունը, գտել է, որ ավելի ուշ ավարտված վարութային գործողության արդյունքում հայտնաբերված թմրամիջոցի չափաբաժինը Կոտայքի մարզում հայտնաբերված լինելու պայմաններում, մեղսագրվող ենթադրյալ հանցանքն ավարտվել է Կոտայքի մարզի դատարանի դատական տարածքում[8]:

---

[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ Մ.Մարգարյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով վերագրվող ենթադրյալ հանցավոր արարքն ավարտվել է վերջինիս՝ Կոտայքի մարզում գտնվող բնակարանում 2022 թվականի հոկտեմբերի 25-ին՝ ժամը 12:02-ից 13:24-ն ընկած ժամանակահատվածում կատարված խուզարկությամբ, որի արդյունքում հայտնաբերվել են 2.6 գրամ քաշով «Մեթամֆետամին» տեսակի, 2.21 և 20.53 գրամ քաշերով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցները[9]: Հետևաբար, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Մ.Մարգարյանին վերագրվող ենթադրյալ հանցագործությունն ավարտվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

16. Վերոգրյալի հետ մեկտեղ հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու հիմքը քննարկման առարկա չի դարձվել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 22-ի դատական նիստի ընթացքում և քրեական վարույթն ըստ տարածքային ընդդատության փոխանցելիս Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը նշված դրույթով չի ղեկավարվել[10], որպիսի պայմաններում վերոնշյալ հիմքի առկայությունը քննարկման առարկա դարձվել չի կարող:

17. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/2101/01/24 (ԿԴ/0729/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր է:

---

[9] Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 235-239:
[10] Տե՛ս նյութեր, հատոր 6, դատական նիստի արձանագրություն, թերթ 20:

Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԵԴ1/2101/01/24 (ԿԴ/0729/01/24) վարույթն ընդդատյա է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մանուել Ֆրունզեի Մարգարյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով թիվ ԵԴ1/2101/01/24 (ԿԴ/0729/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ